խօսում էին մի լեզու եւ այդ լեզուն հայերէն էր:

Եթէ չենք ուզում թեթեւամտօրէն արհամարհել այս զրոյցները, որպէս անարժէք եւ մտացածին առասպելներ, ապա պէտք է ընդունենք, որ նրանք պատմական յայտնի շրջանի ոչ միայն դաղափարական որոնումների, այլ եւ իրական հասումների արձագանդ են:

Այդ շրջանը Բագրատունեաց դարն է:

Բագրատունի կորովի զործիչներն էին, որ հարթեցին, պատրաստեցին այն հողը, որի վրայ իրաւ կարող էին բողբոջել կովկասեան եղբայրակցութեան սերմերը եւ նրանց ձայնատու եւ դաղափարախօս զրոյցները:

Սակայն, կրօնական եւ ֆէոդալական խրամատները, որ ինքնին բարերաստիկ չեն պետական խոշոր կազմակերպութեանց, դառնում են որոշ պայմաններում պայթուցիկ նիւթ ամէն մի հաւաքարար զործի համար: Բիւզանդ եւ Արաբ յաչոտիչ քաղաքականութիւնը բորբոքեց դաւանական կրքերը, խրախուսեց ինքիշխանութեան անջատիչ տենչերը եւ ցրեց դարաւոր ճիզերի արդիւնքը, խափանելով գլուխ բերել քաղաքական մեծ չէնքը: Այն թագերը եւ կամ կիսաթագերը, որ ամիրապետները բաշխում էին Բագրատունի թէ այլ իշխաններին եւ կայսրները ողջունում, իրապէս այլ խորհուրդ չունէին քան արդիլել, խանդարել իսկական թագի երեւումը: Թագերը դարձան անջատ ուղիների գլխաքարեր:

Բագրատունեաց փորձը՝ ընդգրկել համայն Կովկասը, ինչպէս մի մեծ ընտանիք, մի քաղաքական կենակցութեան չաղկապի մէջ, ներկայանում է մեզ որպէս մի խիզախում՝ դաղափարական յայնութեամբ անօրինակ միջնադարեան նեղսիրտ մթնոլորտում եւ կազմում է այս նշանաւոր տոհմի պատմական փառքը:

(Վերջ)